«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐԻ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ – 2026

МЕЖГОСУДАРСТВЕННАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ ВЫСШЕГО ОБРАЗОБАНИЯ «РОССИЙСКО–АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ»
ПЕТРОСЯН ВААГН ГРИГОРЕВИЧ

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ СТАТУС ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Բալաբեկի Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լիլիա Արեգի Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ՆԳՆ կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հոկտեմբերի 8-ին, ժամը 16:00-ին, «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպությունում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ «Ռուս-Հայկական համալսարան» ԲԿՄՊԿԿ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի սեպտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утвервждена в Академии государственного управления РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Геворг Балабекович Даниелян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Ашот Гайкович Хачатрян**

кандидат юридических наук, доцент **Лилия Ареговна Акопян**

Ведущая организация: **Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 8 октября 2026 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Межгосударственной образовательной организации высшего образования «Российско-Армянский университет» (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке МГОВО «Российско-Армянскоий университет».

Автореферат разослан 7 сентября 2026 года.

Ученый секретарь специализированного совета
кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տեղական ինքնակառավարման մարմիններն առանցքային նշանակություն ունեն պետության հանրային կառավարման համակարգում: Տեղական ինքնակառավարման իրավունքի և տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակի կարևորությունն ընդգծվում է ինչպես Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նորմերով, այնպես էլ Սահմանադրությամբ և դրանից բխող ներպետական օրենսդրության իրավական ակտերով: Չնայած Հայաստանում տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմքերը և տեղական ինքնակառավարման համակարգը ներդրվել են շուրջ 30 տարի առաջ, և ձևավորվել է ոլորտը կարգավորող, ընդհանուր առմամբ անհրաժեշտ օրենսդրական համակարգ, այնուամենայնիվ, գործնականում տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս հանդիպում են լուրջ խոչընդոտների: Վերջիններս թելադրված են տարբեր պատճառներով, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման երաշխավորմանն ուղղված ոչ լիարժեք սահմանադրական երաշխիքները, կենտրոնական և տարածքային իշխանությունների կողմից ուղղահայաց և ոչ փոխգործակցային գործելակերպը, համայնքների նկատմամբ վերահսկիչ բնույթի անհարկի գործողությունների իրականացումը, պետության անկայուն վարչատարածքային կառուցվածքը (նկատի ունենք համայնքների միավորման չդադարող գործընթացը), համամասնական ընտրակարգի անցման պայմաններում համայնքի ղեկավարի և ավագանու փոխհարաբերությունների շրջանակի չվերանայված լինելու հանգամանքները և այլն:

Տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են հանրային իշխանական լիազորություններով, որոնց իրացումը պետք է երաշխավորված լինի Սահմանադրությամբ և օրենքներով: Այդ համատեքստում, կարևորության է արժանի տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի վերլուծությունն ու գնահատումը, ինչը հնարավորություն կտա բացահայտելու և վեր հանելու տեղական ինքնակառավարման իրավունքի պատշաճ իրացմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ և իրավակիրառ բազմաթիվ խնդիրներ:

Հաճախ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական կարգավիճակի և գործառնական շրջանակի հետ կապված խնդիրները մեկնաբանվում են օրենքներով սահմանված նորմերի հիման վրա, սակայն, խորքային իմաստով, այդ խնդիրների զգալի մասը գտնվում է սահմանադրական կարգավորման տիրույթում և, ըստ էության, Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար կարգավորումներն օրենքների մակարդակում ոչ ամբողջությամբ իրացված լինելու հանգամանքներից: Հետևաբար, հետազոտության արդիականությունը պայմանավորված է վերը նշված հիմնախնդիրների գիտական համակողմանի ուսումնասիրության և գործնական կիրառելիություն ունեցող հիմնավորված լուծումների մշակման անհրաժեշտությամբ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ մակարդակում լիազորությունների անհարկի ծանրաբեռնվածության նվազեցման հնարավոր ուղիների համալիր ուսումնասիրության և առկա խնդիրների լուծման նպատակով համապատասխան միջոցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական կարգավիճակին վերաբերող ներպետական օրենսդրության ուսումնասիրությունից նույնպես բխում է հետազոտության արդիականությունը, մասնավորապես.

-Սահմանադրությամբ և օրենքներով ամբողջ ծավալով երաշխավորված չեն տեղական ինքնակառավարման իրավունքի իրացմանն ուղղված հիմնադրույթները և դրանցից բխող անհրաժեշտ գործիքակազմերը,

- տեղական ինքնակառավարմանը վերաբերող սահմանադրական երաշխիքներն ամբողջությամբ չեն ընդգրկում վավերացրած Խարտիայի նորմերով սահմանված երաշխիքների շրջանակը, ինչն իր հերթին շղթայական ազդեցություն է ունենում ներպետական կարգավորումների վրա՝ հիմք հանդիսանալով, որոշ դեպքերում, անթույլատրելի իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար,

- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթների ոչ լիարժեք իրացումը սահմանադրական նորմերում,

- օրենսդրական մակարդակում սահմանադրական նորմերին հակասող կարգավորումների առկայությունը և այդ համատեքստում շարունակվող ինստիտուցիոնալ պրակտիկան,

- գործող օրենսդրությամբ նախատեսված տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունների շրջանակից բխող խնդրահարույց իրավակիրառ պրակտիկան,

- տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների գործող մոդելի վերանայման անհրաժեշտությունը, հատկապես՝ ավագանու համամասնական ընտրակարգի և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրակարգի ներդրումը:

Խնդրահարույց է նաև տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման արդյունավետության հետ կապված հիմնահարցերը, հատկապես՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ոլորտում ձևավորված անթույլատրելի պրակտիկայով պայմանավորված: Համայնքների ֆինանսական ինքնաբավության մակարդակը շարունակում է ցածր մնալ, որի հիմնական պատճառներից մեկը թերևս համարվում է Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների և ֆինանսների կենտրոնացումը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական և ֆինանսական ապակենտրոնացման ցածր ցուցանիշը: Այսպիսով, վերը նկարագրված, ինչպես նաև ատենախոսության մեջ բարձրացված բազմաթիվ այլ հիմնահարցերի գիտական հարթության վրա հետազոտման և դրանց լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման անհրաժեշտությամբ է պայմանավորված հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող հիմնախնդիրներին նվիրված աշխատությունների շարքում բավականին մեծ թիվ են կազմում նաև գիտական և հետազոտական բնույթի աշխատանքները, հոդվածները և մենագրությունները: Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի հետ կապված հարցերի հետազոտմանն ուղղված հարցադրումներին տարբեր ասպեկտներով անդրադարձել են հայրենական և

արտասահմանյան գիտնականներ, մասնավորապես՝ Գ. Դանիելյանը, Ա. Խաչատրյանը, Թ. Շաքարյանը, Ա. Հարությունյանը, Կ. Ալթունյանը, Յու. Սուվարյանը, Ա. Բիշարյանը, Շտեֆան Դրագերը, Ժերար Մարքոյը, Գ. Չեբոտարևը, Լ. Վոեվոդինը, Ն. Վիտրուկը, Օ. Կուտաֆինը, Ն. Տկաչևան, Վ. Մակլակովը, Լ. Չիխլաձեն և այլոք: Սակայն հարկ է նկատել, որ, չնայած տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ ռուսական և արտասահմանյան աղբյուրներում առկա տեսական մշակումներին, հայրենական իրավաբանական գրականության մեջ սակավ են խնդրո առարկա թեմայի համակողմանի ուսումնասիրությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի հետ կապված նյութաիրավական հարաբերությունները և իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության առարկա են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող նյութական նորմերը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկան, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ Խարտիայով, ինչպես նաև դրանից բխող Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի և տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի՝ անդամ պետություններին ուղղված բանաձևերում արտահայտած դիրքորոշումները, տարբեր երկրներում խնդրո առարկա հիմնահարցերի վերաբերյալ առկա կարգավորումները և պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի համակողմանի վերլուծությունն է, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող իրավանորմերի և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման, ներպետական օրենսդրությունը միջազգային պայմանագրերով նախատեսված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ գիտագործնական մեթոդաբանությամբ առաջարկների մշակումն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը.

1) համակարգված ներկայացնել տեղական ինքնակառավարման գիտական հայեցակարգերը և տեսությունները,

2) հստակեցնել և ամբողջականացնել տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը սահմանող իրավական հիմքերը,

3) մեկնաբանել հանրային իշխանության համակարգում տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքները, ինչպես նաև վերանայել և լրամշակել այդ երաշխիքների գործող շրջանակը,

4) առաջադրել կանոնակարգումների չափանիշներ՝ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունների առնչությամբ,

5) ներկայացնել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարաման համակարգի ինստիտուցիոնալ հիմնահարցերն եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում,

6) բացահայտել և վեր հանել տեղական ինքնակառավարման հիմնարար երաշխիքներին վերաբերող հակասություններն ու բացերը,

7) համալիր ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրացմանն ուղղված հնարավոր խոչընդոտները և առաջարկել այդ խոչընդոտների վերացմանն ուղղված լուծումներ,

8) բացահայտել և վեր հանել տեղական ինքնակառավարման սահմանադրական իրավունքի իրացման համատեքստում տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության համար որպես տեսական հիմք են ընդունվել տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակին առնչվող առանձին հարցերի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատությունները: Այդ հեղինակներից են՝ Գ. Դանիելյանը, Ա. Խաչատրյանը, Թ. Շաքարյանը, Ա. Հարությունյանը, Կ. Ալթունյանը, Յու. Սուվարյանը, Ա. Բիշարյանը, Շտեֆան Դրագերը, Ժերար Մարքոյը, Գ. Չեբոտարևը, Լ. Վոեվոդինը, Ն. Վիտրուկը, Օ. Կուտաֆինը, Ն. Տկաչևան, Վ. Մակլակովը, Լ. Չիխլաձեն և ուրիշներ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության փուլում ուսումնասիրվել և վերլուծվել են հայրենական և արտասահմանյան երկրների տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակի և տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: Բացի այդ, հետազոտվել են թեմային առնչվող Սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կատարումն ապահովող՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի և Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի անդամ պետություններին ուղղված հանձնարարականներն ու մոնիթորինգային զեկույցները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական մեթոդներ՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի և այլն, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային և այլն:

Հետազոտության գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը Հետազոտական աշխատանքը տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակի և տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմնահարցերի վերաբերյալ համալիր և բազմակողմանի ուսումնասիրություն է, որում փորձ է արվել սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում՝ արդի մարտահրավերներով պայմանավորված, ուսումնասիրել և վերլուծել տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես սահմանադրահիրավական կարգավիճակը, այնպես էլ դրանից բխող տեղական ինքնակառավարման կազմակերպման և իրականացման հիմանահարցերը: Ատենախոսության շրջանակում, վերլուծելով և գնահատելով տեղական ինքնակառավարման հիմունքների միջազգային և հայրենական ինստիտուցիոնալ և իրավակիրառական փորձը, կատարվել են գիտական նշանակություն ունեցող կոնկրետ

եզրահանգումներ: Միաժամանակ, փորձ է արվել ներկայացնել տեղական ինքնակառավարման իրավունքին և տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակին վերաբերելի՝ սահմանադրորեն երաշխավորված կառուցակարգերի կատարելագործմանն և զարգացմանը միտված գործուն առաջարկներ: Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակի և դրա հետ փոխկապակցված տեղական ինքնակառավարման հիմունքների լույսի ներքո՝ ատենախոսության շրջանակում քննարկման առարկա են դարձել այնպիսի հարցեր, որոնք առ այսօր ժամանակակից հետազոտողների շրջանում խորը քննարկման առարկա չեն դարձել և որոնց վերաբերյալ միասնական մոտեցումներ չեն առաջարկվել:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է ուսումնասիրության արդյունքում վեր հանված և գիտականորեն հիմնավորված եզրահանգումներում ու առաջարկություններում, որոնք տեղ են գտել ատենախոսության պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կատարած տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1.Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան ամբողջությամբ վավերացրած պետություն, ըստ էության, կրում է ուղիղ պարտավորություն՝ ներպետական օրենսդրությամբ սահմանելու տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու օրենսդրական գործիքակազմերը: Ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությամբ դեռևս սահմանված չեն իշխանության կենտրոնական մարմինների կողմից տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների ընդունման և որոշումների կայացման գործընթացներում տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու կառուցակարգերը: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի եվրոպական խարտիայի համատեքստում հիմնավորվել է Հայաստանի Հանրապետությունում իշխանության կենտրոնական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցությունների ինստիտուտի օրենքով ներդրման անհրաժեշտությունը, որի համատեքստում ներկայացվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու համապատասխան գործիքակազմերի՝ օրենքով կարգավորման վերաբերյալ դիրքորոշումներ: Այս համատեքստում հիմնավորվել է նաև իշխանության կենտրոնական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու սահմանադրական երաշխիքների ամրագրման անհրաժեշտությունը:

2.Որպես տեղական ինքնակառավարման կառուցակարգային երաշխավորման գործոն՝ հիմք ընդունելով առաջավոր եվրոպական երկրների ինստիտուցիոնալ փորձը և համայնքների միության իրական դերակատարումը տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման համատեքստում, մասնավորապես՝ կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև խորհրդակցությունների ապահովման, համայնքների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն

ուղղված աջակցության, տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքների աշխատակազմերին մեթոդական և խորհրդատվական աջակցության գործընթացներով պայմանավորված, հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության համայնքների միության առանձնահատուկ իրավական կարգավիճակն օրենքով սահմանելու անհրաժեշտությունը: Այդ առնչությամբ ատենախոսության շրջանակում ներկայացվել է առաջարկություն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ ամրագրելով համայնքների միության հասկացությունը, իրավական կարգավիճակը, գործունեության հիմնական նպատակը և ուղղությունները:

3.Ատենախոսությամբ հիմնավորվել է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների շրջանակի և դրանց բովանդակության վերանայման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացվել են տարածքային կառավարման նոր մոդելի հայեցակարգային մոտեցումները: Այդ համատեքստում՝

1) տրվել է տարածքային կառավարման մարմինների՝ որպես տեղական ինքնակառավարման մարմինների հետ Կառավարության հետադարձ կապն ապահովողի հատկորոշումը,

2) հիմնավորվել է այն մոտեցումը, ըստ որի՝ անհրաժեշտ է բացառել տարածքային կառավարման մարմինների հսկողական կամ վերահսկողական բնույթի ազդեցությունները տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: Այս համատեքստում առաջարկվել է տարածքային կառավարման մարմիններին վերապահել համայնքներին մեթոդական և խորհրդատվական աջակցություն տրամադրելու լիազորություն՝ դիտարկելով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները համայնքի կայուն զարգացման և մարզի տարածաշրջանային զարգացման զուգահեռ գործընթացների կազմակերպման լույսի ներքո,

3) նշված մոդելի ինստիտուցիոնալ ներդրման տեսանկյունից գիտագործնական մակարդակում հիմնավորվել է նաև տարածքային կառավարման նորովի բնորոշման անհրաժեշտությունը, այն է՝ տարածքային կառավարումը տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ծրագրերի իրագործման միջոցով պետության կողմից մշակվող և վարվող տարածքային քաղաքականության իրականացումն է: Ըստ այդմ, առաջարկվել է համապատասխան լրացում կատարել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում:

4.Սահմանադրական կարգավորումների համատեքստում հիմնավորվել է պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից օրենքով սահմանված պարտադիր ֆինանսավորում չտրամադրելու դեպքում կենտրոնական իշխանության անգործության անթույլատրելիությունը: Այդ տեսանկյունից հիմնավորվել է ազգային օրենսդրությամբ սահմանված պատվիրակված լիազորությունների շրջանակը գիտագործնական մակարդակում վերանայելու անհրաժեշտությունը, և առաջարկվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրել պատվիրակված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները

պետական բյուջեից չհատկացվելու դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ լիազորությունները չիրականացնելու իրավասությունը:

5.Տեղական ինքնակառավարման մարմինների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ատենախոսությամբ հիմնավորվել է պատվիրակված լիազորություններն օրենքով միաժամանակ համայնքի ղեկավարին և ավագանուն վերապահելու իրավական անհրաժեշտությունը՝ գնահատելով Հայաստանում առկա ինստիտուցիոնալ պրակտիկան, որի համաձայն՝ պատվիրակված լիազորություններն օրենքներով վերապահված են բացառապես համայնքի ղեկավարին, ինչի արդյունքում համայնքի ավագանին դուրս է մնացել այս լիազորությունների իրականացման գործընթացից: Իսկ Սահմանադրության և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտայի կարգավորումներից բխում է, որ պատվիրակված լիազորությունը վերապահվում է տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչն ենթադրում է, որ յուրաքանչյուր լիազորության համար, համայնքի ավագանին և ղեկավարը պետք է ունենան համաչափ և համապատասխան գործառութային հնարավորություններ ու գործիքակազմեր:

6.Համայնքների միավորման արդյունքներով պայմանավորված, ինչպես նաև լիազորությունների ապակենտրոնացման պետական քաղաքականության միտումները հաշվի առնելով՝ հիմնավորվել է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխազդեցություններն ինստիտուցիոնալ և կիրառական իմաստներով վերանայելու անհրաժեշտությունը: Լիազորությունների նման ծանրաբեռնվածությամբ օժտված համայնքի ղեկավարը՝ լինելով համայնքների միավորման արդյունքում ձևավորված բազմաբնակավայր համայնքի գործադիր մարմինը, առնվազն պետք է օժտված լինի համապատասխան մասնագիտական կարողություններով, գիտելիքներով և հմտություններով, ինչը, ներպետական օրենսդրությամբ սահմանված ընտրվելու իրավունքի տարիքային շեմով պայմանավորված, հնարավոր չէ ապահովել իրավակիրառ պրակտիկայում: Հիմնավորվել է նաև այն, որ բազմաբնակավայր համայնքի սեփականության և բազմամիլիարդանոց բյուջեի կառավարումը, ինչպես նաև ազգային օրենսդրությամբ սահմանված հարյուրավոր սեփական լիազորությունների իրականացումը, օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրների հնարավոր լուծումներն ենթադրում են արհեստավարժ մոտեցումներ, ինչը գործող տեղական ինքնակառավարման իրավակարգի պայմաններում փոքր-ինչ անիրատեսական է: ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի կարգավորումների լույսի ներքո, հաշվի առնելով Հայաստանում տեղի ունեցած վարչատարածքային բարեփոխումները, դրանցով պայմանավորված նոր իրողությունները, համայնքների առջև դրված խնդիրների և լիազորությունների շրջանակը՝ հիմնավորվել է արհեստավարժ համայնքի ղեկավարի ինստիտուտի օրենսդրական մակարդակում ներդրման անհրաժեշտությունը և սահմանադրական կարգավորումների համատեքստում այդ ինստիտուտի ներդրման անխոչընդոտ հնարավորությունը: Այդ կապակցությամբ ներկայացվել են նաև մրցութային կարգով համայնքի ղեկավար ընտրելու իրավական գործիքակազմերն օրենսդրությամբ ամրագրելու վերաբերյալ առաջարկներ:

7.Առաջադրվել է համամասնական ընտրակարգով ձևավորվող համայնքի ավագանու և անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի սահմանադրական մոդելը, այս համատեքստում՝ հիմնավորելով վերջիններիս

փոխհարաբերությունների շրջանակի վերանայման անհրաժեշտությունը, քանի որ այդ մարմինների փոխհարաբերությունների ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային իմաստներով վերանայելու փոխարեն, օրենսդիրը շարունակել է գործածության մեջ դնել տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ այն մոդելը, որն իրավացիորեն կիրառվում էր մեծամասնական ընտրակարգով ընտրված տեղական ինքնակառավարման մարմիններ ունեցող համայնքների համար: Միաժամանակ հիմնավորվել է այն մոտեցումը, ըստ որի, սահմանադիրն ավագանու առջև համայնքի ղեկավարի հաշվետու լինելու, հետևաբար, նաև պատասխանատու լինելու կարգավորումները Սահմանադրությամբ նախատեսելիս, անուղղակիորեն շեշտադրել է համայնքի ավագանու՝ բարձրագույն տեղական ինքնակառավարման մարմին հանդիսանալու հանգամանքը: Այս համատեքստում հիմնավորվել է նաև Հայաստանում ավագանու ղեկավարի ինստիտուտի ներդրման, ինչպես նաև դրա օրենսդրական ամրագրման իրավական անհրաժեշտությունը սահմանադրական կարգավորումների լույսի ներքո:

8.Ատենախոսությամբ հիմնավորվել է միջհամայնքային համագործակցության հնարավոր ձևերի շրջանակի ընդլայնման անհրաժեշտությունը՝ միջհամայնքային համագործակցությանն առավել հայեցակարգային մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև միջհամայնքային միավորումներից բացի միջհամայնքային համագործակցության այլ իրավական ձևեր նախատեսելու նպատակով, քանի որ Սահմանադրությամբ նախատեսված է միջհամայնքային համագործակցության բացառապես մեկ իրավական ձև, այն է՝ միջհամայնքային միավորում, որպիսի պայմաններում, համայնքները միջհամայնքային համագործակցություն կարող են ձևավորել միայն հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող միջհամայնքային միավորում ստեղծելու միջոցով: Այս համատեքստում հիմնավորվել է Սահմանադրության 189-րդ հոդվածի բովանդակային վերանայման անհրաժեշտությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ սահմանադրական կարգավորումները պետք է չսահմանափակվեն միայն միջհամայնքային միավորումների ինստիտուտի սահմանմամբ, այլ նախատեսեն միջհամայնքային համագործակցության բազմազան իրավական ձևերի կիրառման հնարավորություններ և դրանց իրականացման սահմանադրական երաշխիքներ: Ըստ այդմ՝ հիմնավորվել է նաև «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայի և շրջանակի վերանայման անհրաժեշտությունը:

9.Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով սահմանված հիմնադրույթների լույսի ներքո հիմնավորվել է Սահմանադրությամբ համայնքի ֆինանսական միջոցների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների համաչափության, համայնքների ֆինանսական անկախության և ինքնուրույնության, պատվիրակված լիազորությունների պարտադիր ֆինանսավորման սկզբունքների վերանայման և լրամշակման անհրաժեշտությունը: Չնայած այն հանգամանքին, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան ուղղակիորեն ամրագրել է համայնքների ֆինանսական ինքնուրույնության և համայնքների ֆինանսական հնարավորությունների և լիազորությունների համաչափության երաշխիքները, Սահմանադրությամբ դեռևս սահմանված չեն համայնքների ֆինանսական լիակատար անկախությունն երաշխավորող, ինչպես նաև

համայնքների ֆինանսական հնարավորությունների և օրենքով վերապահված լիազորությունների համաչափության սկզբունքն ենթադրող նորմերը: Ատենախոսությամբ հիմնավորվել է, որ ՀՀ Սահմանադրության 185-րդ և 186-րդ հոդվածներն ամբողջությամբ չեն երաշխավորում համայնքների ֆինանսական ինքնուրույնությունը, ինչպես նաև, համայնքների ֆինանսական հնարավորությունների և լիազորությունների համաչափության ապահովումը: Այդ համատեքստում հիմնավորվել է Սահմանադրական բարեփոխումների շրջանակում Սահմանադրության փոփոխությունների նախագծում տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքների ամրագրման անհրաժեշտությունը, որոնց շրջանակը ներկայացված է ատենախոսությունում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության գիտական նշանակությունը դրսևորվում է նրանում, որ այն տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման հետ առնչվող միջազգային և ներպետական իրավական նորմերի, իրավակիրառ պրակտիկայի և միջազգային փորձի համակարգային ուսումնասիրմանն ուղղված համալիր աշխատանք է, որտեղ վեր են հանվել ինչպես գիտական, այնպես էլ գործնական բնույթի հիմնախնդիրներ՝ հընթացս ներկայացնելով եզրակացություններ և առաջարկություններ, որոնք ուղղված են այդ խնդիրների լուծմանը: Դրանով պայմանավորված՝ հետազոտությունն ունի գործնական և կիրառական նշանակություն ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ նոր կարգավորումների նախատեսման և գործող կարգավորումներում փոփոխությունների առաջադրման իմաստներով, այնպես էլ տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման իրավակիրառական պրակտիկայի կատարելագործման առումով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում: Ատենախոսության արդյունքներն արտացոլված են Հեղինակի կողմից տպագրված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր գիտական ամսագրերում: Ատենախոսության արդյունքները կիրառվել են նաև տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից, տեղական ինքնակառավարման բնագավառի քաղաքականության մշակման շրջանակներում, որի առնչությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից պաշտոնապես տրվել է համապատասխան ներդրման տեղեկանք:

Հետազոտության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 8 ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ-իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումն ու դրանց ներդրումը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ ***«Տեղական ինքնակառավարման պատմահրավական հիմունքները և հիմնական տեսությունները»*** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ ***«Տեղական ինքնակառավարման ձևավորման պատմահրավական նախադրյալները»*** վերնագրով, հանգամանորեն վերլուծվել են տեղական ինքնակառավարման ձևավորման պատմահրավական ակունքներն ու տեղական ինքնակառավարման էվոլյուցիան, տեղական ինքնակառավարման հին և դասական տեսությունները, համայնքների և կենտրոնական իշխանությունների փոխհարաբերությունների զարգացման առանձնահատկությունները՝ դրանց պատմական էվոլյուցիայի համատեքստում:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում «**Տեղական ինքնակառավարման իրավունքի հիմնական տեսությունները**» վերնագրով, բացահայտվել և վերլուծվել են տեղական ինքնակառավարման իրավական կարգավորման բնույթը, Ժամանակակից գրականության մեջ համայնքների իրավունքների երաշխիքների տարբեր սահմանումները, տեղական ինքնակառավարման իրավունքի տարբեր տեսական մոտեցումները և տեղական ինքնակառավարման գաղափարախոսությունը:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում ***«Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման կայացման և զարգացման փուլերն ու միտումները»*** վերնագրով, ներկայացվել և վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման առաջին ինստիտուցիոնալ հիմքերը, տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման, ձևավորման և զարգացման փուլերը, վարչատարածքային բարեփոխումները (համայնքների միավորման գործընթացը և արդյունքները) և այլն:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ ***«Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակը և երաշխիքները հանրային իշխանության համակարգում»*** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ ***«Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական կարգավիճակը և փոխհարաբերությունների արդի հիմնախնդիրները»*** վերնագրով, անդրադարձ է կատարվում «տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակ» հասկացության տեսական բովանդակության վերլուծությանը, Հայաստանի Հանրապետության համայնքների և դրանց տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրահիրավական

կարգավիճակին, դրանից բխող ինստիտուցիոնալ և իրավակիրառական հիմնահարցերին: Ներկայացվում են համայնքների և դրանց տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի վերլուծության առանձնահատկությունները, բացահայտվում են տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակից բխող առկա ինստիտուցիոնալ և կիրառական բնույթի խնդիրներն ու խոչընդոտները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ ***«Համայնքների իրավունքների սահմանադրական իրավական երաշխիքները»*** վերնագրով, հանգամանորեն վերլուծվել են համայնքների և դրանց տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավական բազմաշերտ երաշխիքները, անդրադառնալով տեղական ինքնակառավարման հիմնական իրավական բնութագրիչներին, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման սահմանադրական իրավունքի պատշաճ իրացմանը, տեղական ինքնակառավարման մարմինների անկախ իրավական կարգավիճակի ապահովմանը, համայնքների ինքնուրույնությանը, տեղական ինքնակառավարման մարմինների ինքնաբավությանը:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ ***«Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունները»*** վերնագրով, ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունների հետ կապված սահմանադրաիրավական և օրենսդրական վերլուծությունները և առանձնահատկությունները, բացահայտվում է տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունների համատեքստում առկա ինստիտուցիոնալ և կիրառական բնույթի խնդիրներն ու խոչընդոտները, անդրադարձ է կատարվել տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման փոխհարաբերությունների վերաբերյալ տեղական ինքնակառավարման եվրոպական չափանիշներով սահմանված կարգավորումների վերլուծությանը և եզրահանգումներին:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ ***«Տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ բարելավման նախընտրելի ուղղությունները»*** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ ***«Տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմնախնդիրները»*** վերնագրով, ուսումնասիրվել և վերլուծվել են տեղական ինքնակառավարման սահմանադրական կարգավորումները, համայնքների միավորման գործընթացներում միավորվող կամ բաժանվող համայնքների կարծիքը լսելու գործիքակազմերը և իրավակիրառական պրակտիկան, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի իրավական արժեքը, համայնքի ավագանու համամասնական ընտրակարգի և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրակարգի ներդրման պայմաններում այդ մարմինների կարգավիճակը և փոխհարաբերությունները, միջհամայնքային միավորումների հետ կապված սահմանադրական (օրենսդրական) կարգավորումներն ու միջազգային փորձը, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման իրավակիրառական պրակտիկան և այլն:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ ***«Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնաբավությունը»*** վերնագրով, ուսումնասիրվել, վերլուծվել և ներկայացվել է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնաբավության հատկորոշումը, Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնաբավության սկզբունքը, տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության սկզբունքը, առավելապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների ֆիսկալ ինքնուրույնությունն ամրապնդող սահմանադրական երաշխիքների համատեքստում:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները, հեղինակի եզրահանգումները և օրենսդրական փոփոխությունների առաջարկները, որոնցից հիմնարարները հանգում են հետևյալին.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նախաձեռնվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը նոր խմբագրությամբ մշակելու գործընթաց, առաջարկվում է ատենախոսությունից բխող հետևյալ առաջարկությունները ներառել նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի նախագծում: Առաջարկվում է օրենքի նախագծի կարգավորման առարկան սահմանող հոդվածով լրացնել տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու իրավահարաբերությունները, իսկ օրենքի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները սահմանող հոդվածում ամրագրել կարգավորում պարտադիր խորհրդակցելու վերաբերյալ: Առաջարկվում է նախագծում սահմանել հետևյալ դրույթը՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է միջազգային պայմանագրերով ստանձնած, տեղական ինքնակառավարման մարմինների հետ անմիջականորեն առնչվող քաղաքականությունների մշակման և որոշումներ կայացնելու գործընթացներում այդ մարմինների հետ խորհրդակցելը: Նախագծում առաջարկվում է նախատեսել առանձին գլուխ հետևյալ վերտառությամբ՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելը»: Նշված գլխում առնվազն անհրաժեշտ է սահմանել՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցությունների նպատակը, խորհրդակցելու առարկան և դրա հնարավոր շրջանակը, խորհրդակցական գործընթացում ներգրավված կողմերի՝ պետության և համայնքների իրավունքները և պարտականությունները, խորհրդակցական գործընթացների ժամկետների հետ կապված հարցերի կարգավորումները, խորհրդակցության կոնկրետ ձևերը, խորհրդակցության արդյունքներն ու դրանց իրավական ազդեցությունները, տեղական ինքնակառավարման մարմինների կամ համայնքների միության դատական պաշտպանության իրավունքը՝ նրանց խորհրդակցության իրավունքի խախտման դեպքերում:

Կարևորելով Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը, բարձր գնահատելով առաջավոր եվրոպական երկրներում համայնքների միությունների նշանակալի դերակատարությունը, նպատակ ունենալով ապահովելու Խարտիայի պահանջների ինկորպորացումը ՀՀ ազգային օրենսդրության շրջանակներում և, ամենակարևորը՝ նկատի ունենալով խորհրդակցելու ինստիտուտի սահմանադրական երաշխիքների կարևորությունը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետ գործունեության և ինքնուրույնության երաշխավորման

տեսանկյունից, առաջարկվում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի «Տեղական ինքնակառավարումը» վերտառությամբ գլխում նախատեսել հետևյալ սահմանադրական երաշխիքը. «Պետական մարմինները տեղական ինքնակառավարմանը վերաբերող քաղաքականության մշակման, պլանավորման և տեղական ինքնակառավարման մարմիններին անմիջականորեն առնչվող որոշումներ կայացնելու գործընթացներում պարտավոր են խորհրդակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու կարգավորումները սահմանվում են օրենքով»:

2. Հարկ է արձանագրել, որ ՀՀ մունիցիպալ իրավունքի գիտության շրջանակում տրված չէ տարածքային կառավարման ընդհանրական բնորոշումը, միաժամանակ, ազգային օրենսդրությամբ ևս սահմանված չէ տարածքային կառավարման հասկացությունը[1]: Ատենախոսության այս բաժնի շրջանակներում կատարված գիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, առաջարկվում է տարածքային կառավարման բնագավառի լիազոր պետական մարմնին նախաձեռնել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց, մասնավորապես, տարածքային կառավարման սկզբունքներից առաջ, սահմանել տարածքային կառավարման հասկացությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «**Տարածքային կառավարումը՝ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ծրագրերի իրագործման միջոցով, պետության կողմից մշակվող և իրականացվող տարածքային քաղաքականության իրականացումն է**»:

3. Ելնելով ատենախոսության շրջանակում կատարված վերլուծություններից և եզրահանգումներից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է անդրադառնալ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների շրջանակի հստակեցման և այդ փոխհարաբերությունների առարկայի վերանայման հարցերին: Վաղուց ժամանակն է, որ Հայաստանում տարածքային կառավարման մարմինների գործունեությունը վերափոխվի և ծառայի իր հիմնական նպատակին, այն է՝ տարածքային զարգացմանը: Մեր կարծիքով, քանի դեռ գործնականում տարածքային կառավարման մարմինը դիտարկվում է որպես տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ Կառավարության հետադարձ կապի ապահովողը, հնարավոր չէ հասնել Կառավարության տարածքային համաչափ զարգացման ռազմավարական նպատակի և դրանից բխող միջոցառումների իրագործմանը: Այս համատեքստում արժանահավատ ենք համարում դիտարկել, որ անհրաժեշտ է ներդնել տարածքային կառավարման նոր մոդել, ինչը, իր հերթին, ենթադրում է նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների վերանայված առավել հստակ իրավական շրջանակների ձևավորում: ՀՀ ներպետական օրենսդրությամբ «տարածքային կառավարում» հասկացության սահմանմանը զուգահեռ, անհրաժեշտություն կառաջանա մշակելու տարածքային կառավարման մարմինների նոր մոդելի հայեցակարգը: Այդ հայեցակարգը պետք է հիմնված լինի հետևյալ երեք հիմնարար բաղադրիչների վրա՝

[1] Տե՛ս «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք: ՀՕ-252-Ն, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2019.12.11/88(1541) Հոդ.1158 (www. arlis.am)

1) Ազգային օրենսդրությամբ տարածքային կառավարման մարմնի (մարզպետի) լիազորությունների համալիր վերանայում՝ տնտեսական զարգացման և ներդրումների խթանման ուղղություններով անհրաժեշտ գործիքակազմեր ենթադրող լիազորություններ վերապահելու համատեքստում:

2) Տարածքային կառավարման մարմնի (մարզպետի) աշխատակազմի կառուցվածքի և գործառույթների վերանայում: Աշխատակազմի կառուցվածքը գործառութային իմաստով համապատասխանեցում տարածքային համաչափ զարգացման ռազմավարական նպատակի իրագործման գաղափարին և շրջանակներին, հիմնականում առաջ մղելով տարածաշրջանային (ռեգիոնալ) տնտեսական զարգացման համար ստորաբաժանման (դեպարտամենտի) ձևավորման հնարավորությունը:

3) Հիմք ընդունելով առաջավոր եվրոպական փորձը՝ առաջարկվել է մարզպետին վերապահել ոչ միայն մարզի զարգացման ծրագրերի մշակման, այլև ինքնուրույն բյուջետային պլանավորում իրականացնելու լիազորություններ և դրանց համապատասխան օրենսդրական գործիքակազմեր, մասնավորապես՝ ռեգիոնալ (մարզային և տարածաշրջանային) տնտեսական, ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Այդ կապակցությամբ առաջարկվում է «Տարածքային կառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

4. Ինչ վերաբերում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների շրջանակին, ապա ատենախոսության շրջանակում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ամփոփման արդյունքում հիմնավորվել է, որ այդ հարաբերությունների գործող մոդելը բովանդակային և ինստիտուցիոնալ առումներով ունի վերանայման անհրաժեշտություն: Այդ առնչությամբ առաջարկվում է բացառել ուղղահայաց հսկողական կամ վերահսկողական բնույթի ազդեցությունները տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ, փոխարենն առաջարկվում է տարածքային կառավարման մարմիններին վերապահել համայնքներին մեթոդական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերող հիմնական մարմնի դերակատարումը: Միաժամանակ, որպես այդ մարմինների փոխհարաբերությունների շրջանակի վերանայման հիմք, առաջարկվում է դիտարկել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները համայնքի կայուն զարգացման և մարզի տարածաշրջանային (ռեգիոնալ) զարգացման զուգահեռ գործընթացների կազմակերպման լույսի ներքո:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի կայուն զարգացումն օրենքով համարվում է համայնքի պարտադիր խնդիր, որն, իր հերթին, բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված պետության քաղաքականության հիմնական նպատակներից, առաջարկվում է դիտարկել համայնքների կայուն զարգացման գործընթացներում, մասնավորապես՝ մարզային և տեղական տնտեսական զարգացման շրջանակներում մարզպետի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ուղիղ փոխհարաբերություններ ձևավորելու նոր մոդելի մշակման հնարավորությունը: Այդ մոդելը, մեր պատկերացմամբ, պետք է հիմնված լինի տեղական և տարածաշրջանային (ռեգիոնալ) տնտեսական զարգացումն ապահովելու գաղափարի վրա՝ ունենալով հստակ դերակատարներ (համայնքային մակարդակում՝ տեղական

ինքնակառավարման մարմիններ, մարզային մակարդակում՝ մարզպետ և նրա աշխատակազմ) և լիազորությունների ու գործառույթների հստակ բաշխում:

Տեղական և տարածքային զարգացման վերը նշված մոդելի մշակման և կիրարկման նպատակով առաջարկվում է Կառավարությանը՝ ի դեմս լիազոր պետական կառավարման մարմին հանդիսացող Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, որին օրենքով վերապահված են տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ոլորտներում քաղաքականության մշակման իրավասությունները, մշակել տարածքային և տեղական տնտեսական զարգացման հայեցակարգ և դրանից բխող միջոցառումների ծրագիր: Նշված հայեցակարգի միջոցառումների ծրագրով առաջարկվում է սահմանել օրենսդրական փոփոխություններ կատարելու միջոցառումներ, որոնց կիրարկման արդյունքում հնարավոր կլինի ներդնել մարզային և տեղական տնտեսական զարգացման շրջանակներում մարզպետի և տեղական ինքնակառավարման մարմինների ուղիղ փոխհարաբերություններ ձևավորելու նոր մոդելը:

6. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարին վերապահված 31 պատվիրակված լիազորություններից 28-ի իրականացման համար պետության կողմից ֆինանսավորում չի տրամադրվում: Ոլորտային օրենքներով սահմանված 71 պատվիրակված լիազորություններից ֆինանսավորվում է միայն «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված երկու լիազորությունները, որոնք վերաբերում են ընտրական տեղամասերի կահավորմանն ու քարոզչական պաստառների համար տեղեր նախատեսելուն: Մնացած պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ֆինանսավորում չի հատկացվում: Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր 102 պատվիրակված լիազորություններից ֆինանսական ապահովում ունեն ընդամենը 4-ը:

Ելնելով վերը ներկայացված եզրահանգումներից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել ազգային օրենսդրությամբ սահմանված պատվիրակված լիազորությունների շրջանակը՝ ուժը կորցրած ճանաչելով օրենքներով սահմանված այն պատվիրակված լիազորությունները, որոնք չեն ֆինանսավորվում պետական բյուջեից: Սահմանադրությամբ և Խարտիայով պատվիրակված լիազորությունը վերապահվում է տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս մոտեցումն ենթադրում է, որ յուրաքանչյուր լիազորության իրականացման գործընթացում համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը պետք է ունենան համահավասար և համապատասխան գործառութային հնարավորություններ և գործիքակազմեր: Մինչդեռ ազգային օրենսդրական դաշտի ուսումնասիրություններից կարելի է եզրահանգել, որ պատվիրակված լիազորություններն օրենքներով վերապահված են բացառապես համայնքի ղեկավարին, որի արդյունքում համայնքի ավագանին դուրս է մնում այս լիազորությունների իրականացման գործընթացից:

7. Հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, ինչպես նաև հաշվի առնելով Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները՝ առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվող «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի

նախագծում վերանայել բոլոր պատվիրակված լիազորությունների իրավական կարգավորումները՝ դրանք ձևակերպելով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համահավասար իրականացնելու տրամաբանությամբ: Մասնավորապես, առաջարկվում է պատվիրակված լիազորությունները վերապահել ինչպես համայնքի ղեկավարին, այնպես էլ՝ համայնքի ավագանուն՝ ապահովելով համայնքի ներկայացուցչական և գործադիր մարմինների հավասարակշռված մասնակցությունը դրանց իրականացման գործընթացում: Միաժամանակ, առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում կատարել լրացում՝ որպես երաշխիք ամրագրելով հետևյալը. պատվիրակված լիազորությունները ֆինանսական միջոցների չհատկացման դեպքում չեն իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

8. Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում համայնքների միավորման արդյունքներով պայմանավորված, ինչպես նաև լիազորությունների ապակենտրոնացմանն ուղղված պետական քաղաքականության միտումները հաշվի առնելով, առաջացել է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունները՝ ինստիտուցիոնալ և կիրառական իմաստներով, վերանայելու անհրաժեշտությունը: Նման ծավալի լիազորություններով օժտված համայնքի ղեկավարը, որպես բազմաբնակավայր համայնքի գործադիր մարմնի ղեկավար, պետք է օժտված լինի ոչ միայն համապատասխան մասնագիտական գիտելիքներով և հմտություններով, այլև արդյունավետ կառավարման, ռազմավարական պլանավորման և հանրային կառավարման ոլորտներում անհրաժեշտ կոմպետենցիաներով, որոնք հնարավորություն կտան պատշաճ և արդյունավետ կերպով իրականացնել իրեն վերապահված լիազորությունները:

9. Միավորված բազմաբնակավայր համայնքի սեփականության, բազմամիլիարդանոց բյուջեի ինչպես նաև ազգային օրենսդրությամբ սահմանված հարյուրավոր սեփական լիազորությունների իրականացումն օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրների արդյունավետ լուծման ապահովումը պահանջում են բարձր մակարդակի մասնագիտական կարողություններ և կառավարչական հմտություններ: Այս համատեքստում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման, համայնքային ռեսուրսների նպատակային և պատասխանատու կառավարման, ինչպես նաև համայնքային ծառայությունների որակի բարելավման տեսանկյունից հիմնավորված է արհեստավարժ (պրոֆեսիոնալ) համայնքի ղեկավարի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի կարգավորումների լույսի ներքո, ինչպես նաև Հայաստանում իրականացված վարչատարածքային բարեփոխումների, դրանցով պայմանավորված նոր իրողությունների, համայնքների առջև դրված խնդիրների և վերապահված լիազորությունների ծավալի էական ընդլայնման պայմաններում, հասունացել է պրոֆեսիոնալ համայնքի ղեկավարի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը: Կարծում ենք, որ Սահմանադրության 181-րդ հոդվածով նախատեսված՝ համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության սահմանադրական մոդելը հնարավորություն է տալիս օրենսդրական մակարդակում սահմանել համայնքի ղեկավարի ընտրության նոր կարգ՝ հիմքում դնելով մրցութային ընտրության մեխանիզմը: Այս մոտեցումը թույլ կտա

ապահովել համայնքային կառավարման համակարգի մասնագիտականացումը, բարձրացնել համայնքի ղեկավարի պաշտոնի արդյունավետությունը և համայնքային կառավարման որակը:

10. Գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրությունը, մասնավորապես՝ համայնքի ավագանու վերաբերյալ ամրագրված սահմանադրական կարգավորումները, որևէ կերպ չեն կարող խոչընդոտ հանդիսանալ օրենսդրի համար՝ օրենքով համայնքի ավագանու նախագահի ինստիտուտ ներդնելու և դրա գործունեության շրջանակին վերաբերող կառուցակարգեր նախատեսելու առումով: Համամասնական ընտրակարգով ձևավորվող համայնքի ավագանու և անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի սահմանադրական մոդելն ինքնին ենթադրում էր այս երկու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների շրջանակի զգալի վերանայում, հետևաբար՝ դրանց փոխազդեցությունների ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային վերափոփոխում: Սակայն օրենսդիրը շարունակեց գործածության մեջ դնել տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ այն մոդելը, որն իրավաչափորեն կիրառվում էր մեծամասնական ընտրակարգով ընտրված տեղական ինքնակառավարման մարմիններ ունեցող համայնքների համար: Կարծում ենք, որ սահմանադիրը, Սահմանադրությամբ ամրագրելիս, համայնքի ղեկավարի՝ ավագանու առջև հաշվետու և պատասխանատու լինելու կարգավորումները, անուղղակիորեն շեշտադրել է համայնքի ավագանու՝ որպես տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմնի առանձնահատուկ դերը: Այս համատեքստում, հաշվի առնելով նաև եվրոպական մի շարք երկրներում կիրառվող, մեր կարծիքով, հաջողված ինստիտուցիոնալ փորձը, նպատակահարմար ենք գտնում, որ Հայաստանում ևս ներդնել համայնքի ավագանու ղեկավարի ինստիտուտը՝ որպես ավագանու ինքնուրույն կազմակերպական և գործառութային դերակատարության ամրապնդման կարևոր երաշխիք: Ավագանու ղեկավարի ինստիտուտի ներդրումը, մեր կարծիքով, ոչ միայն հնարավոր նախադրյալներ կստեղծի համայնքի երկու տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության հավասարակշռված համակարգի ձևավորմանը, այլև էական դեր կունենա ավագանու՝ որպես համայնքի ներկայացուցչական մարմնի իրական դերակատարության բարձրացման, ինչպես նաև ավագանու առջև համայնքի ղեկավարի պատասխանատվության պատշաճ և կայուն իրավակիրառ պրակտիկայի ձևավորման գործում:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկվում է Ազգային Ժողովին և Կառավարությանը հանդես գալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում և ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենսդրական նախաձեռնությամբ:

11. Սահմանադրությամբ համայնքին և միջհամայնքային միավորմանը տրված է հանրային իրավունքի իրավաբանական անձի իրավական կարգավիճակ, սակայն առ այսօր ներպետական օրենսդրությամբ սահմանված չեն հանրային իրավունքի իրավաբանական անձի ինչպես հասկացությունը, այնպես էլ առանձնահատկությունները: Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմինը պետք է նախաձեռնեն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու

մասին» օրենքի նախագծի մշակումը: Քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող լրացումները պետք է հիմնված լինեն ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածի կարգավորումների վրա՝ հաշվի առնելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կարգավիճակի վերաբերյալ առաջավոր միջազգային փորձը: Հայաստանի Հանրապետության կառավարությանը և տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնին առաջարկվում է Քաղաքացիական օրենսգիրքը լրացնել հետևյալ վերտառությամբ 60.1-րդ հոդվածով. «Հոդված 60.1. Հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացությունը և առանձնահատկությունները:»:

12. Գտնում ենք, որ «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքն ուղղված է Սահմանադրության 189-րդ հոդվածի օրենսդրական մանրամասնեցմանը, հետևաբար՝ կարգավորում է միջհամայնքային միավորումների ձևավորման, գործունեության և կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Միջհամայնքային միավորումը, մեր կարծիքով, միջհամայնքային համագործակցության ընդամենը մեկ դրսևորումն է: Հետևաբար, առաջարկվում է ընդլայնել «Միջհամայնքային միավորումների մասին» օրենքի կարգավորման առարկան՝ դրան առավել հայեցակարգային մոտեցում ցուցաբերելու և միջհամայնքային համագործակցության այլ ձևեր ևս սահմանելու միջոցով:

Վերը նշվածի հիման վրա առաջարկվում է Կառավարությանը նախաձեռնել ՀՀ «Միջհամայնքային միավորումների մասին» օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու գործընթաց՝ հետևյալ վերտառությամբ՝ «Միջհամայնքային համագործակցության մասին» օրենք: Միջհամայնքային միավորման ձևավորման իրավական հիմքերը չպետք է լինեն գերկարգավորված կամ բարդեցված: Այդ համատեքստում առաջարկվում է «Միջհամայնքային համագործակցության մասին» օրենքի նոր խմբագրությամբ նախատեսել, կամավոր հիմունքներով միջհամայնքային միավորումներ ձևավորելու դեպքում՝ դրանց կազմակերպաիրավական ձևի և մարմինների սահմանման հարցի կարգավորումը դարձնել առավել պրակտիկ և ճկուն՝ հնարավորության տալով տեղական ին ընտրելու միավորման կազմակերպաիրավական ձևը (մասնավոր իրավունքի իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձ և այլն) և դրանով պայմանավորված՝ դրա մարմինների կառուցվածքը:

Այս իմաստով, հիմք ընդունելով ատենախոսության և հետազոտության այդ մասին վերաբերող արդյունքներն արտացոլելու նպատակով հրատարակված գիտական հոդվածի շրջանակում կատարված վերլուծությունը, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև արված եզրահանգումները, առաջարկվում է օրենքով սահմանել, որ միջհամայնքային համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝ միջհամայնքային միավորումների ստեղծման միջոցով, համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի հիման վրա, համատեղ ստեղծված համայնքային առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության միջոցով, համայնքի պատվերով ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված այլ իրավական ձևերով:

13. Տեղական ինքնակառավարման մարմինները, ինստիտուցիոնալ առումով, զրկված են անշարժ գույք հանդիսացող հարկվող օբյեկտի հարկման ենթակա բազան

գնահատելու կամ վերագնահատելու իրավական հնարավորությունից: Հայաստանում հարկային օրենսդրության բարեփոխումների արդյունքում համայնքների կողմից անշարժ գույքի վերագնահատում իրականացնելու կարգավորումները դուրս են մնացել գործող ՀՀ հարկային օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից: Արդյունքում համայնքները չունեն հնարավորություն սեփական նախաձեռնությամբ սկսել անշարժ գույքի վերագնահատման գործընթաց, ինչն ոչ միայն սահմանափակում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքներն ու հնարավորությունները, այլև էական խոչընդոտներ է առաջացնում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնաբավության մակարդակի բարելավման հարցերում:

14. Հաշվի առնելով Հայաստանում նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների գործընթացը և հիմք ընդունելով ատենախոսության շրջանակում՝ Խարտիայի լույսի ներքո քննարկված տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքները, դրանց վերաբերյալ իրականացրած վերլուծությունն ու կատարված եզրահանգումները, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Սահմանադրական բարեփոխումների խորհրդին, տեղական ինքնակառավարմանը վերաբերող սահմանադրական կարգավորումների վերանայմանն ուղղված աշխատանքների շրջանակում, դիտարկել ստորև ներկայացված առաջարկությունները և քննարկել դրանց նպատակահարմարությունը Սահմանադրության փոփոխությունների նախագծում.

1) Սահմանադրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ Սահմանադրությամբ համայնքի ֆինանսական միջոցների և համայնքի խնդիրների կամ լիազորությունների համաչափության սկզբունքի Սահմանադրությամբ ամրագրման հարցին: Ուստի առաջարկվում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի տեղական ինքնակառավարանը վերաբերող գլխում նախատեսել հետևյալ սահմանադրական երաշխիքը. «Համայնքների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորություններին»,

2) Համայնքների ֆինանսական անկախության կամ ինքնուրույնության սկզբունքի աահմանադրական ամրագրումը, ըստ էության, հնարավորություն կընձեռի ինստիտուցիոնալ և իրավակիրառական մակարդակներում երաշխավորելու համայնքների բյուջեների ինքնուրույնությունը՝ դրանց ձևավորման, կառավարման և տնօրինման գործընթացում, ինչպես նաև որպես հանրային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ, համայնքի դեպքում՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, օրենսդրությամբ իրենց առջև դրված խնդիրների լուծմանը հասնելու և վերապահված լիազորությունների իրականացման ապահովմանը,

3) Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկվում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ տեղական ինքնակառավարումը վերտառությամբ գլխում նախատեսել հետևյալ սահմանադրական երաշխիքը. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է համայնքների ֆինանսական ինքնուրույնությունը և օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունը»,

4) Պատվիրակված լիազորությունների պարտադիր ֆինանսավորման, ինչպես նաև այդ համատեքստում համայնքների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործող սահմանադրական երաշխիքները բավարար չեն: Այս պարագայում առկա է սահմանադրահիրավական անհրաժեշտություն վերանայելու Սահմանադրությամբ ամրագրված՝ պատվիրակված լիազորությունների պարտադիր ֆինանսավորման վերաբերյալ հիմնադրույթները՝ նպատակ ունենալով ապահովել համայնքներին պատվիրակված լիազորությունների պարտադիր ֆինանսավորումը:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի տեղական ինքնակառավարումը վերտառությամբ գլխում ամրագրել հետևյալ սահմանադրական երաշխիքները. տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորություններն ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման, պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով պետական բյուջեից ֆինանսավորում չտրամադրելու դեպքում, համայնքները պարտավոր չեն իրականացնել այդ լիազորությունները:

15. Համայնքների ֆինանսական ինքնաբավության ապահովման տեսանկյունից, հիմք ընդունելով Խարտիայի 9-րդ հոդվածով սահմանված պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքով ձևավորված այն իրավակարգավորումը, որի համաձայն՝ համայնքի ավագանին իրավասու է օրենքով սահմանված փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը վերանայել մինչև տասը տոկոսի չափով, առաջարկվում է հարկային օրենսդրությամբ համայնքի ավագանուն վերապահել նաև անշարժ գույքի հարկի դրույքաչափերը, օրենքով սահմանված շրջանակներում, վերանայելու իրավասություն: Նման իրավակարգավորումը կարող է էականորեն նպաստել համայնքների սեփական եկամուտների ավելացմանը, ինչի արդյունքում կուժեղանա համայնքների ֆինանսական ինքնաբավությունը և կբարձրանա տեղական ինքնակառավարման մարմինների գործառութային արդյունավետությունը:

Ընդհանրացնելով կատարված հետազոտության արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում տեղական իքննակառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմնախնդիրները բազմաշերտ են և բազմաբովանդակ, ուստի մեկ հետազոտական աշխատանքի շրջանակում դրանց ամբողջությամբ ուսումնասիրությունն ու համակողմանի վերլուծությունը հնարավոր չէ: Այդուհանդերձ, կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ տեղական ինքնակառավարման ոլորտում առկա է խորքային և համակարգային ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտություն: Այդ հանգամանքով պայմանավորված՝ կարծում ենք, որ պետությունը, ի դեմս գործադիր և օրենսդիր իշխանությունների, պետք է հետևողականորեն մշակի և իրականացնի ոլորտային գիտականորեն հիմնավորված և հասցեական պետական քաղաքականություն՝ ուղղված տեղական ինքնակառավարման համակարգում առկա ինստիտուցիոնալ հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը, համայնքների ինքնուրույնության ամրապնդմանը և տեղական ժողովրդավարության հետագա զարգացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Պետրոսյան Վ., «Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը և դրա հետ կապված հիմնախնդիրները»: «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 2025.1, էջեր 180-189:
2. Պետրոսյան Վ., Հարոյան Ս., «Տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելու գործիքակազմերը և դրանց հետ կապված ինստիտուցիոնալ հիմնախնդիրները ՀՀ-ում»: «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, Հատոր ԺԶ, N 4 (59) 2025, էջեր 32-39:
3. Պետրոսյան Վ., «Միջհամայնքային միավորումների սահմանադրաիրավական կարգավիճակը և միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի ներդրման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում»: «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2025, № 3, էջեր 25-38:
4. Պետրոսյան Վ., «Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունները և դրանց հետ կապված հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում»: «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 2025.2, էջեր 121-137:
5. Պետրոսյան Վ., «Համայնքի ղեկավարի սահմանադրաիրավական կարգավիճակը և դրա վերափոխման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»: «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, Հատոր ԺԶ, N 6 (61), 2025, էջեր 46-54:
6. Պետրոսյան Վ., «Տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունները և դրանց իրականացման հետ կապված հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2025, № 4, էջեր 84-95:
7. Պետրոսյան Վ., «Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնաբավությունը Հայաստանի Հանրապետությունում»: «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2026, № 1, էջեր 98-108:
8. Պետրոսյան Վ., «Համայնքի ավագանու նախագահ (ղեկավար) ունենալու իրավական անհրաժեշտությունը և դրա ներդրման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության սահմանադրության համատեքստում»: «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, Հատոր ԺԷ, N 2 (63), 2026, էջեր 93-101:
9. Պետրոսյան Վ., «Տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքների վերանայման անհրաժեշտությունը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթների համատեքստում», Վահագն Պետրոսյան: «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 2026.1, էջեր 195-207:

ПЕТРОСЯН ВААГН ГРИГОРЕВИЧ

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ СТАТУС ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 — Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление).

Защита диссертации состоится 8 октября 2026 года в 16:00 на заседании специализированного совета 063 по юриспруденции Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего при Межгосударственной образовательной организации высшего образования «Российско-Армянский университет», по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123.

РЕЗЮМЕ

Актуальность данного исследования обусловлена необходимостью комплексного изучения национального законодательства, регулирующего конституционно- правовой статус органов местного самоуправления, в частности:

Основополагающие положения, направленные на реализацию права на местное самоуправление, и вытекающие из них необходимые инструменты не гарантированы Конституцией и законами в полном объёме, конституционные гарантии, касающиеся местного самоуправления, не в полной мере охватывают круг гарантий, установленных нормами ратифицированной Хартии, что, в свою очередь, оказывает цепное воздействие на внутригосударственное регулирование и в отдельных случаях создаёт предпосылки для формирования недопустимой правоприменительной практики, неполное внедрение положений Европейской хартии местного самоуправления в конституционные нормы, наличие на законодательном уровне положений, противоречащих конституционным нормам, и сохраняющаяся в данном контексте институциональная практика, проблематичная правоприменительная практика, возникающая в рамках отношений между органами местного самоуправления и органами территориального управления, предусмотренных действующим законодательством, необходимость пересмотра действующей модели взаимоотношений органов местного самоуправления, в особенности внедрения пропорциональной системы выборов в совет общины и косвенной системы избрания руководителя общины.

Зачастую вопросы, касающиеся правового статуса и функционирования органов местного самоуправления, интерпретируются на основе норм, установленных законом. Однако, в более глубоком смысле, значительная часть этих вопросов находится в рамках конституционного регулирования и, по сути, обусловлена обстоятельствами, при которых основные положения, закрепленные в Конституции, не в полной мере реализуются на уровне законодательства. Поэтому актуальность данного исследования обусловлена

необходимостью всестороннего научного изучения вышеупомянутых вопросов и разработки обоснованных решений, имеющих практическое применение.

Научная новизна работы заключается в том, что данное исследование представляет собой комплексное и всестороннее изучение конституционно-правового статуса органов местного самоуправления и институциональных проблем системы местного самоуправления.

В работе предпринята попытка в контексте конституционного регулирования и международно-правовых стандартов, с учетом современных вызовов, исследовать и проанализировать как конституционно-правовой статус органов местного самоуправления, так и вытекающие из него основные вопросы организации и осуществления местного самоуправления. В рамках диссертации, путем анализа и оценки международного и национального институционально-правового опыта основ местного самоуправления, были сделаны конкретные выводы, имеющие научное значение.

Цель диссертации – всесторонний анализ конституционно-правового статуса органов местного самоуправления, а также разработка предложений с использованием научно-практической методологии для совершенствования правовых норм и правоприменительной практики, регулирующих сферу местного самоуправления, и для приведения национального законодательства в соответствие со стандартами, предусмотренными международными договорами.

Научная значимость диссертации проявляется в том, что она представляет собой комплексную работу, направленную на систематическое изучение конституционно-правового статуса органов местного самоуправления, а также международных и национальных правовых норм, правовой практики и международного опыта, связанных с осуществлением права на местное самоуправление, в которой подняты как научные, так и практические вопросы, а также представлены выводы и рекомендации, направленные на решение этих вопросов.

Результаты диссертации нашли отражение в научных статьях, опубликованных автором в различных научных журналах. Результаты диссертации также были использованы Министерством территориального управления и инфраструктуры Республики Армения в рамках разработки политики в области местного самоуправления, в связи с чем Министерство территориального управления и инфраструктуры Республики Армения официально выдало соответствующий сертификат о вкладе.

INTERSTATE EDUCATIONAL ORGANIZATION OF HIGHER EDUCATION "RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY"

VAHAGN GRIGORI PETROSYAN

CONSTITUTIONAL LEGAL STATUS OF LOCAL SELF-GOVERNMENT BODIES

Dissertation Abstract for the Degree of Candidate of Legal Sciences in the Field of 12.00.02 – Public Law (Constitutional Law, Administrative Law, Municipal Law, European Law, Public Administration).

The defense of the dissertation will take place on October 8, 2026, at 16:00, at the session of the Specialized Council 063 on Law of the Higher Qualification Committee of the Republic of Armenia, operating at the "Russian-Armenian University" Interstate Higher Educational Organization (123 Hovsep Emin Street, Yerevan 0051).

SUMMARY

The relevance of this research stems from the study of domestic legislation relating to the legal status of local self-government bodies, in particular:

The Constitution and laws do not fully guarantee the fundamental provisions aimed at the implementation of the right to local self-government and the necessary tools arising from them, constitutional guarantees related to local self-government do not fully cover the scope of guarantees established by the norms of the ratified Charter, which in turn has a chain effect on domestic regulations, serving as the basis, in some cases, for the formation of inadmissible legal practice, incomplete implementation of the provisions of the European Charter of Local Self-Government in constitutional norms, the existence of regulations at the legislative level that contradict constitutional norms and the ongoing institutional practice in that context, problematic legal practice arising from the framework of relations between local self-government and territorial government bodies provided for by the current legislation, the need to review the current model of relations between local self-government bodies, especially the introduction of the proportional electoral system for the council of elders and the indirect electoral system for the head of the community.

Often, issues related to the legal status and operational framework of local self-government bodies are interpreted on the basis of the norms established by laws, however, in a deeper sense, a significant part of these issues is within the scope of constitutional regulation and, in essence, is due to the circumstances in which the fundamental regulations enshrined in the Constitution are not fully implemented at the level of laws. Therefore, the relevance of this research is conditioned by the need for a comprehensive scientific study of the above-mentioned issues and the development of substantiated solutions with practical applicability.

The scientific novelty of the work lies in the fact that the research work is a complex and multifaceted study of the constitutional and legal status of local self-government bodies and the institutional issues of the local self-government system, in which an attempt was made, in

the context of constitutional regulations and international legal standards, conditioned by modern challenges, to study and analyze both the constitutional and legal status of local self-government bodies, as well as the basic issues of organizing and implementing local self-government arising from it. Within the framework of the dissertation, by analyzing and evaluating the international and domestic institutional and legal experience of the foundations of local self-government, specific conclusions of scientific significance were made.

The purpose of the dissertation is a comprehensive analysis of the constitutional and legal status of local self-government bodies, as well as the development of proposals using scientific and practical methodology to improve the legal norms and law enforcement practices regulating the sphere of local self-government, and to bring domestic legislation into line with the standards provided for by international treaties.

The scientific significance of the dissertation is manifested in the fact that it is a complex work aimed at the systematic study of the constitutional and legal status of local self-government bodies, as well as international and domestic legal norms, legal practice and international experience related to the exercise of the right to local self-government, where both scientific and practical issues have been raised, while presenting conclusions and recommendations aimed at solving these issues. Due to this, the research has practical and applied significance both in terms of providing new regulations in the legislation of the Republic of Armenia and proposing amendments to existing regulations, as well as in terms of improving the legal practice of exercising the right to local self-government.

The results of the dissertation are reflected in scientific articles published by the Author in various scientific journals. The results of the dissertation have also been used by the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia in the framework of developing a policy in the field of local self-government, in connection with which the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia has officially issued a corresponding contribution certificate.